Պատմվածք, Արձակ, Հայ գրականություն

13+

ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆ

ՄԻԱԿ ԵՐԳԸ

Այդ տանը մի աղջիկ էր ապրում: Նա գեղեցիկ չէր, բայց գրավիչ էր՝ տարօրինակ, բացառիկ գրավչությամբ: Մարդիկ կախարդվում էին նրա լոկ մի հայացքից, նրա թեկուզ միայն քայլվածքից: Ի՞նչ կար նրա մեջ այդպես թովիչ՝ ոչ ոք չէր կարող ասել:

Ամեն երեկո աղջկա հայրը դուրս էր գալիս փողոց, լուսամուտների փեղկերը ծածկում: Կեռերի ծայրը նա տալիս էր ներս, որտեղ նրա կինն ամրացնում էր դրանք: Հետո ընտանիքը պառկում էր քնելու: Երբ կեսգիշեր էր լինում, երբ խաղաղ շնչում էին ծնողները, փոքր քույրերն ու եղբայրը, հանկարծ դրսում լսվում էր սիրով հիվանդ որևէ մեկի խոր մխացող երգը: Աղջիկը խաղաղ կիսարթնանում էր և փակ աչքերով, կարծես երազի մեջ, լսում ցանկացող սրտի կարոտը: Ով էր երգողը՝ աղջիկը չգիտեր: Լսում էր և մտածում: Մի պահ նրան հիպնոսում էր այդ սերը, կարծես դրսից անտեսանելի մի ուժ թափանցում էր ներս և շրջապատում նրան: Նա ցանկանում էր դուրս ելնել, փարվել անծանոթ տղայի պարանոցով՝ լոկ միայն նրա համար, որ նա այդպես խոր սիրում էր նրան: Սակայն մի կարճ վայրկյան էր տևում այդ զգացմունքը, ապա աղջիկը բարկանում էր.— ի՞նչ են ուզում իրենից այդ բոլոր երիտասարդները: Չէ՞ որ նա չունի ոչ մի գեղեցկություն, մինչդեռ բազմաթիվ ուրիշ աղջիկներ կարող էին երջանիկ լինել այդ տղաներից յուրաքանչյուրի սիրով... Եվ նա, փոխանակ դուրս ելնելու, կարծես երգողին վշտացնելու համար, ավելի էր փաթաթվում վերմակի մեջ և գլուխը ծածկում, որ չլսի...

Լինում էին գիշերներ, երբ երգի փոխարեն լսվում էր սրնգի վճիտ ու զով նվագը: Սիրահարվածն իր հետ բերած էր լինում որևէ սրնգահար երիտասարդի, որպեսզի նա գիշերվան ու աղջկան հայտներ սիրահարի սերը, նրա կարոտը: Եվ տարօրինակ էր այն, որ իրոք, նվագի միջից լսվում էին ոչ թե նվագողի, այլ սիրահարվածի սրտի հառաչանքները: Սրնգահարի թոքախտավոր, գունատ դեմքն անտարբեր էր լինում ու հանդարտ, թվում էր, թե նա նվագարանի մի մասնիկն էր լոկ, իսկ իսկական նվագողը նա էր, ում աչքից փախել էր քունն այդ ոչ մի գեղեցկություն չունեցող, բայց թովչանքով ձգող աղջկա համար...

Աղջիկը նվագը լսում էր նույն հուզումով, ապա և նույն անտարբերությամբ, և դարձյալ փաթաթվում էր վերմակի մեջ, և դարձյալ դուրս չէր գալիս:

Լինում էին ամիսներ, երբ մի համառ երիտասարդ, կանոնավոր կերպով, ամեն գիշեր, ճիշտ նույն ժամին, գալիս երգում էր և գնում: Նա շարունակ երգում էր նոր ու նոր երգեր՝ մեկը մյուսից ավելի սրտառուչ, ավելի հուզիչ: Այդ ամիսներին ուրիշ ոչ մեկը չէր համարձակվում մոտենալ աղջկա լուսամուտներին: Անցնում էին օրերն ու շաբաթները, բայց աղջիկը դուրս չէր ելնում: Հետո, մի գիշեր, տղան այլևս չէր գալիս. նա կամ

հրաժարված էր լինում անհույս սիրաշահումից, կամ նրան գտնում էին քաղաքի մերձակա որևէ վայրում՝ իր հուսահատ ձեռքով, թե՞ ուրիշի վրեժխնդիր ձեռքով սպանված... Հենց նույն գիշեր, աղջկա լուսամուտների մոտ նրան փոխարինում էր մի ուրիշը...

Մի գիշեր, սակայն, ոչ ոք չերգեց կամ նվագեց: Աղջիկն արթնացավ անսովոր լռությունից, զգաց ժամանակը, հասկացավ, որ կեսգիշերն անց է, հիշեց, որ քնի մեջ ևս, հակառակ մյուս օրերի, նա ոչինչ չէր լսել: Սպասեց մի քիչ, հետո ավելի շատ, ավելի շատ... Եվ առաջին անգամ իր ողջ կյանքում՝ նա իրեն զգաց վիրավորված ու լքված: Թեթև, սպիտակ շալն ուսերին գցելով, նա ելավ բակ, ապա փողոց: Ցով էր: Նա սրսփաց: Փաթաթվեց շալի մեջ, նայեց: Անկյան ետևում իրենց լուսամուտների մոտ՝ ոչ ոք չկար: Աղջիկը բարկությունից բոլորովին սթափվեց: Նայեց ավելի ուշադիր, կարծես չհավատալով, ապա երբ ուզում էր նորից ներս մտնել, հանկարծ տեսավ մի տղայի՝ դիմացի անկյան աղբյուրի մոտ, աղբյուրի գլխաքարին հենված: Մոտեցավ նրան:

— Ինչո՞ւ ես կանգնել,— հարցրեց աղջիկը:

— Նայում եմ:

— Ինչո՞ւ,— զարմացավ աղջիկը:

— Աղբյուրի ջրին:

— Ինչո՞ւ,— զարմացավ աղջիկը:

— Նայում եմ, թե ինչպես ջուրը գնում է, գնում ու չի վերջանում:

Տղան լռեց: Աղջիկը նույնպես: Միայն ջուրն էր իջնում անձայն և թեթև խշշում գուռի մեջ:

— Ինչո՞ւ չես երգում,— հարցրեց աղջիկը:

— Աշակերտը վարպետի մոտ համեստ պիտի լինի: Աղբյուրը երգում է իմ փոխարեն: Նա է վարպետը:

Աղջիկը քմծիծաղ տվեց.

— Ես չեմ հասկանում, աղբյուրն ի՞նչ է երգում որ...

— Ամենամաքուր, ամենաանկեղծ երգը նա է երգում:

Աղջիկը զարմացած նայեց տղային: Բացի այդ տղայից բոլորը երգում էին կամ նվագում. նա առաջինն էր, որ լռում էր. նա տարօրինակ տարբերվում էր մյուսներից...

— Որ չպիտի երգես՝ գնա,— ասաց աղջիկը բարկացած:

Տղան գնաց:

Աղջիկը մտավ ներս, պառկեց, բայց քունը չտարավ:

Հետևյալ գիշեր նորից լսվեց մի սովորական երգ: Աղջիկն արթնացավ տհաճության զգացումով: Նա հասկացավ, որ ավելի գոհ կլիներ, եթե երգի փոխարեն լսեր նախորդ գիշերվա լռությունը: Սակայն հակառակ իր ցանկության՝ եղանակը ներս էր թափանցում համառ ու անկոչ:

Երկրորդ գիշերը սրինգ նվագեցին: Աղջիկն արթնացավ բարկացած: Ձեռքերով զուր փակեց ականջները, ապա խրեց գլուխը բարձի տակ և մինչև լույս մնաց այդպես պառկած:

Երրորդ գիշերը նա արթնացավ լռության մեջ: Մի քանի րոպե սրտատրոփ սպասելուց հետո վեր կացավ, շալն առավ ուսերին: Բայց հազիվ դռանը մոտեցած դրսից լսվեց մի նոր երգի ձայն: Աղջիկը զայրացած ուսերից վար առավ շալը, որի ծայրը խփվեց փոքրիկ սեղանի վրա դրված ջրի բաժակին ու ցած նետեց:

Բաժակի ձայնի վրա հայրն արթնացավ:

— Չեն թողնում, որ քնեմ,— բողոքեց աղջիկը:

— Ուզո՞ւմ ես՝ գնամ-վռնդեմ,— առաջարկեց հայրը:

— Հարկավոր չէ, հայրիկ: Ես շուտով դրանց ձայնը կկտրեմ,— հանգստացրեց աղջիկը:

Մի ամիս հետո նա ամուսնացավ մեկի հետ, առանց ընտրելու: Հայրն իրենց սենյակներից երկուսն առանձնացրեց, տվեց աղջկան: Լուսամուտի տակ ընդմիշտ ու վերջնական լռեցին գիշերային երգերը:

Մի տարի հետո աղջիկը հեռացավ ամուսնուց: Մեր չկար, իսկ ապրել առանց սիրո՝ անտանելի էր: Իր մանկության և աղջկության այդ սենյակներում նա մնաց մենակ:

Ամեն անգամ, երբ կեսգիշեր էր լինում, աղջիկը հին սովորության համեմատ արթնանում էր: Արթնանում էր, բայց ոչ ոքի չէր սպասում: Գիտեր, որ այլևս երգ չէր լինելու և գոհ էր դրա համար: Բայց գիտեր նաև, որ լռության մեջ չէր վերադառնալու աղբյուրի երգին ունկնդրող այն տղան: Մի գիշեր, միայն մի գիշեր, նա ինքը վեր կացավ ու գնաց դուրս՝ ջրի երգը լսելու: Լսեց, ոչինչ չհասկացավ ու վերադարձավ:

Եվ մինչև հիմա աղջիկն ապրում է այնտեղ:

Իսկ որտե՞ղ է այն տղան:

Ոչ ոք չգիտե...

1935